



ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 9-ին, Ս. Վարդանանց ազգային-եկեղեցական մէծ տոնի օրը, երևոյան ժամը 8-ին Հոգեռոր Ճեմարանում, ի հիշատակ Վարդանանց, կազմակերպվեց հանդիս, որին ներկա էրն Մայր Աթոռի միարանությունը զերապատիվ Տ. Սահակ Կապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի զիսավարությամբ, Գերագույն Հոգեռոր Խորհրդի հարգելի անդամները, Ճեմարանի դասախոսները, ուսանողությունը, Մայր Աթոռի պաշտոններմայունը և հրավիրալների կողեկի մի բազմություն:

Ս. Վարդանանց հիշատակին նվիրված հանդեսը բացվեց Տերոնական աղոթքով և Հայաստանի Պետական հիմնով:

Բացման խոսքով հանդես եկավ Հոգեռոր Ճեմարանի վերատեսուչ պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյանը, որը հակիրճ բայց բովանդակալից խոսքերով ընդգծեց Վարդանանց գոյամարտի կրոնա-բարոյական, պատմական ու հայրենասիրական նշանակությունը մէր անցյալ պատմության մէջ և նշեց, որ հայ սերունդները երախտագիտության զգացմունքներով են ոգեկուել միշտ Ս. Վարդանանց մարտիկների խնկելի հիշատակը:

Ապա զեկուցման համար ծափահարությունների տակ խոսքը տրվեց Գերագույն Հոգեռոր Խորհրդի անդամ պրոֆ. Ա. Ղարիբյանին, որը Վարդանանց հերոսամարտի եախընթաց և հնատագա դեպքերի մասին մանրա-

մասն ու գասափարակիչ մի բանախոսություն արեց, վերլուծելով Սահակ-Միսրոպյան ժամանակաշրջանի բաղաքական, հասարակական, մշակութային և կրթական ընդհանուր իրադարձությունները: Հարդեմ պրոֆեսորը մէծ խանգամավառությամբ խոսեց Ս. Վարդանանց հերոսների անձնվիրության, մարտական արիության, եկեղեցամիսիրության, ժողովրդասիրության ու հայրենասիրության մասին, նշելով միաժամանակ մէր ժողովրդի հատուկ պայքարի և հաղթանակի անընկենի ոգին, ապրելու և տեսելու վճռականությունը, ազատության սերը: Մայր Աթոռի միարանության հողմից խոսեց հոգեշնորհ Տ. Միսրոպ արենա Անթարյանը, որը իր սեղմ և ոգեշունչ խոսքերով համառոտակի բնութագրեց Ս. Ղևոնյանց և Ս. Վարդանանց «ողբին», ընդգծելով այդ հավատավոր և հայրենասեր ոգու խիզախությունը, հանուն հավատի, Հայրենիքի և ժողովրդի ընծայաբերվելու պատրաստակամությունը, մարդկայնությունը, լավատեսությունը, պաշտամունքը հայրենական սրբությունների և Ազգային եկեղեցու հանդեպ, և այն բոլոր բարոյական բարձր առաքինությունները, որոնք այդ ոգուց, որպես հոգեռոր ու նվիրական ժառանգ, մնացին մէր ժողովրդին:

Ճոխ, բովանդակալից ու գնեցցիկ էր նաև հանդեսի գեղարվեստական մասը: Թելադրա-

կան, հուզիչ և տպավորիչ էին օրվա տոնի խորհրդին նվիրված բանաստեղծություններն ու ճառերը, երգերն ու արտասանությունները, թարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանը ոգևորությամբ կարդաց բանաստեղծ Նաիրի Զարյանի «Զայն հայրենական» պոեմաշարքից մի հատված։ Վարդանանց նվիրված իր ինքնագիր բանաստեղծությունը կարդաց Հովհանոր Ճեմարանի նախկին սան Գ. Շեկիլյանը։ Վ. Թեքեյանի «Եկեղեցին Հայկական» դասական և հոյակապ բանաստեղծությունը արտասանեց բարեշնորհ Ազատ սարկավագ Սանթուրյանը։ Բուլղարիայից Մայր Աթոռ ժամանած նոր ճեմարանական Գրիգոր Փափազյանը ջերմ և վարակիչ հուզականությամբ ընթերցեց Հովեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Անթարյանի «Իմ ժողովրդի հերոսամարտը» բանաստեղծությունը։

Հովեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Մանվանյանը բացառիկ հուզմունքով և կատարողական մեծ վարպետությամբ երգեց Ա.

Տիգրանյանի «Դավիթ բեկ» օպերայից Դավիթ բեկի հիանալի արիան՝ «Ո՞չ», իմ շբանադ, սիրուն Հայրենիքությունը։ Հովհանոր Ճեմարանի ուսանողական երգախմբի կողմից երգվեցին Ս. Վարդանանց հիշատակին նվիրված շարականներ և խմբերգներ։ Մեներգները հաջողությամբ կատարում էին Խորեն սարկավագ Պալյանը և ուսանող Պողոսը։ Հանդեսի գեղարվեստական բաժնի պատրաստման և կատարման համար շանք և հմտություն շէր խնայել զասախոս Հ. Գևորգյանը։ Ծնորհավորության արժանի էր Ճեմարանի վերատեսչությունը Ս. Վարդանանց խնկելի հիշատակին նվիրված այս հանդեսի կազմակերպման համար։

Նախագահ գերապատիվ Տ. Սահակ և պիտի կոպոսի փակման խոսքով և «Պահպանիշ»-ով ավարտվեց Ս. Վարդանանց դրական-գեղարվեստական այս հույժ շահեկան հանդեսը։

Մրտագին հարգանք Վարդանանց խնկելի հիշատակին։

